

ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

Հայրապետական Դիւանի մէջ ստացուած Հայութեան զանագան վայրերից և անկիւններից եկած պաշտօնական գրութիւններից, քաղուածաբար տալիս ենք հետեւեալ տեղեկութիւնները, որ մեր կեանքի և դժբաղդութեան պատկերի մի-մի լուսանկար էջեր են:

Կիլիկիայի սահմաններում, Անտիոքի Սուէտիա գիւղում հայ համայնքին հասած դժբաղդութիւնների նկարագիրն այդպիսի ուրուազծերից մէկն է: Բաղդի յաջող դիսուածով ազատուած հայութեան մնացորդներից մէկի նամակը հետեւեալն է նկարագրում: —

«Ի՞նչ գրելիս չեմ գիտեր, արդի Հայկական ճգնաժամային օրերու մէջ Հայուն տակնապը, Հայուն ցաւը և կրած հալածանքը աննկարագրելի է ամենուրեք: Մենք ալ այդ դժբաղդութեան ենթարկուեցանք և բաղդն այսօր եղիպտոսի՝ Նեղոսի ափերը բերած է մեզ...»

«.... Համաշխարհային պատերազմը սկսեց. Թիւրքիա ալ իր պատերազմական վիճակը հրատարակեց ու զինուորներ հաւաքեց. նախառական մեզ՝ Հայոցս զէնք ալ տուառն.... յետոյ... անգէն թողեց և բեռնակիր (համալ), կտմ բանուոր (ամիլէ) նկատեց զիրենք, քիչ յետոյ սկսան Հայերուս վրայ կասկածել, անշուշտ, Գերման թելաղրութեամբ.... և տուներ խուզաբկեց, աքսորեց, կախաղան բարձրացուց.... և սատանի միտքը չարիքներ ու պատիժներ հնարեց և հասցուց մեր զիսուն.... ի վերջոյ տեղահանութեան ձեռնարկեց... Ումանց զիրքը, վայրը, ոչ եթէ ապստամբելու, այլ լոկ կեանքի, լնտաննեաց սրբութեան պաշտպանութեան համար անյարմար նկատուելուն, ակամայ կամօք ստիպուեցան հնազանդիլ.... ճամբան հազար ու մէկ տանջանքներով կողոպտուեցան, անպատուեցան,

ապանուեցան, կանայք և կուսանք մեր աշքի առջև լլկուեցան.... որ մէկը յիշեմ.... սիրտս կըակէ, հոգիս բոց ու արիւն....

«... Մինակ մենք չենք այդ վիճակին, այլ մեզ նմաններ շատ-շատ, բազմաթիւ, անթիւ....

«... Այդ ահարկու գաղանք, Թիւրքիան, ամէն չարիք մեզ վրայ հասցնելէն յետոյ, տեղահանութեան համար ալ շըջաբերականներ գրուեց, որպէս զի թողումք մեր բնակավայրը և կառավարութեան յարմար դատած մէկ վայրը երթանք.... հոն, ուր մեզ համար մահը յօրինուած էր արդէն....

«Մենք Անտիոք, Առէյտիայի հայ զիւղերս, որոնք են Հաճի-Հապիալշի, 300 տուն, Պիթիաս՝ 250 տ., Եօղունոլուգ՝ 280 տ. Խտրպիկ՝ 200 տ. Վազրֆ 130 տ., Քէպուսիյէ՝ 250 տ., այդ հրամանին չուզեցինք հնագանդիւ... մեծաւ մասամբ լեռ բարձրացանք: Առոր վրայ.... Թիւրքը իւր կանոնաւոր զօրքով և պաշը-պօզուզներով մեր վրայ յարձակեցաւ, Երկնային զօրութեամբ և երիտասարդ կըտքիմներուն շնորհիւ ետ մղուեցան.... միշտ բազմաթիւ կորուստ տալով.... 50 օրուան չափ լեռ մնացինք. և այդ միջոցին մեզմէ միայն 15 հոգի նահատակուեցան. մինչդեռ թշնամիներէն 250-300... սատակեցան,... և 3-4000 կյարձակեն մեզ վրայ:

«Եռը, որ Մովսէսի լիո կլոչուի, բոլորովին մեզ՝ Հայոցս կպատկանի, որուն արևմտեան կողմը Միջերկրականի մէկ եղբն է.... 50 օրէ յետոյ Ֆրանսական մարդանաւ մը նշմարուեցաւ... մեր պարզած խաչ-նշան դրօշնիս տեսաւ և ծովափ մօտենալով մեզ հետ յարաբերութեան մէջ մտաւ և վիճակներս հասկցաւ.... խոստացաւ 8 օրէն... գալ, մեզի ապահով... Երկիր մ'տանել: Այդ 8 օրուայ մէջ երկու սաստիկ ընդհարութներ ևս ունեցանք թշնամիէն և Աստուծոյ զօրութեամբ այս անգամ ալ յաղթող ելանք:

«... Երբ 8 օրը լրացաւ... Ֆրանսական հինգ հսկայ մարդանաւեր (երեւեցան), որոնք հրեշտակ էին (մեզ համար)... փոխադրեցին զմեզ... ի Պօրտ-Մայիդ.... այժմ զոհ

ենք մեր վիճակէն. կը գտնուենք վրաններու տակ, իբր 5000 հոգիանոց բանակ մը կազմած ենք։ Անգղիական կառավարութիւնը կը հոգայ մեր ուստեստը, իսկ եգիպտահայոց կողմէ զգեստ կը հոգացուի։

«... Օր մը մեր ծննդավայրը, որ այժմ դժոխք է, շնորհիւ Ֆրանսիայի, Ռուսիոյ, Անգլիայի և Իտալիայի հզօր և արդարասէր պետութիւնների դրախտի պիտի վերածուի և մենք... կվերադառնանք հոն, կը վայելենք... արդեօք։

«... Մեր միջէն Քիպուսիյէ, գրեթէ ամբողջովին.... Հաճի-Հապիպիլիէն և Պիթիասէն փոքր մաս մը... յօժարացան դաղթելու հսազանդիլ... դրեթէ $\frac{1}{8}$ դաղթեցին... ագոնցմէ որ և է լուր մը չկայ։ Թիւրքիոյ այժմեան դրութիւնն ի նկատի ունելով, անշուշտ, ոչ ևս են հիմա... իրենց մէջ կային Քէպուսիյէցի երկու երիտասարդ... քահանաներ...»

«Հոս կը գտնուենք 5 քահանայ.... Առաջնորդ Գերապատիւ.... քանիցս մեղ այցելեց, յորդորեց և հայրական սիրով միսիթարեց զմեղ...»։—

* * *

Անցեալ ապրիլի 9-ին Փարիզում, Սորբոնի համալսարանի մեծ դահլիճում «Ֆրանսիական և օտարազգիների մերձեցման» ընկերութեան ջանքերով տեղի ունեցաւ մի մեծ հաւաքոյթ, ի պատիւ արիւնոտ և հիւծուող Հայաստանի։ Ֆրանսիայի և Փարիզի լաւագոյն որդիները շտապել էին գալ և իրենց ներկայութեամբ յարգանքի ու հիացման նշան ցոյց տալ նահատակուած երկրի մահ գտած զաւակների յիշատակին և գթութեան խօսք լսեցնել տալ կորստից փրկուածների մնացորդների համար։

Ֆրանսիական բոլոր լրագիրները, առանց բացառութեան, տուին այդ մեծ ժողովի նկարագիրը, որ երեսցաւ Ֆրանսիական ազգի ողու մեծութիւնը և իւր զաւակների բերանով արտայայտած ջերմ համակրութիւնը Հայութեան։